Օգնությունն Արցախին շարունակվում է

Այսօր, երբ ամբողջ աշխարհը մտահոգված է Արցախի ճակատագրով, ինչպես կարող էին ձեռները ծալած նստել Երևանի Էրեբունու շրջանի բնակիչները:

Վերջերս էլ շրջանային խորհրդի նախաձեռնությամբ Արցախի ազատամարտիկներին օգնելու նպատակով թաղային կոմիտեները կազմակերպեցին հանգանակություն: Շրջանի բնակչությունը միայն այդ օրը 500000 ռուբլի հանգանակեց և ուղարկեց Արցախի օգնության ֆոնդին:

Ինչպես տեղեկացրեց շրջխորհրդի գործադիր կոմիտեի կազմբաժնի վարիչ Ազատ Եղոյանը՝ օգնությունը Արցախի հերոսամարտիկներին շարունակվելու է: Ինչ խոսք, շրջխորհրդի նախաձեռնությունը ուսանելի է և պետք է այն ընդօրինակեն մայրաքաղաքի մյուս շրջանների բնակիչները:

ooo

Մեր հայրենակից ԼԱՎՐԵՆՏԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԸ, որի հետ օրերս ծանոթացանք մայրաքաղաքում, բնակվում է Տուապսեի շրջանի Զորրորդ Հունայկա գյուղում: Հայրենիք էր եկել իր հետ առձեռն բերելով իրենց գյուղի ամբողջ համայնքի հանգանակությունը՝ 11 հազար 900 ռ. գումար:

— Հատուկ ծրագրերի պետական վարչությունից եմ գալիս,— գումարի փոխանցման անդորրագիրը ցույց տալով ասաց Լ. Առաքելյանը:— Թեթևացած եմ զգում, ճիշտ է, մի երևելի գումար չենք փոխանցել, բայց գյուղը, որտեղ մեծ թիվ են կազմում թոշակառուներն ու միայնակ մարդիկ, ինչ որ չափով կատարեց իր պարտքն Արցախի հանդեպ: Հին պատմություն ունեցող մեր գյուղը ներկայումս ունի 75 տնտեսություն, տասնամյակներ շարունակ կողք-կողքի, հաշտ ու խաղաղ ապրում են ռուսներ և հայեր: Հանգանակության կազմակերպման գործում մեծ աջակցություն ցույց տվեցին և իրենց խնայված միջոցներից տրամադրեցին ազգությամբ ռուս մեր համագյուղացիները: Հուզիչ էր միայնակ Եղենա Միխայլովնայի արարքը, որն իր չնչին թոշակը տրամադրելով հանգանակությունը կազմակերպողներին՝ Աստծուց խնդրեց, որպեսզի շուտափույթ կանխվի Արցախում կատարվող արյունահեղությունը, իրականանա արցախահայության և ամբողջ հայ ժողովրդի բաղձանքը: Եվ այդպես, յուրաքանչյուրն իր հնարավորության սահմաններում ի սպաս դրեց խնայողությունները՝ Ալեքսանդրը Վոդորոցկին՝ 500 ռ., Իգոր Ռեվաշևը՝ 800, Վրեժ Սահակյանը՝ 1000 ռ. և այլն: Մը-տադիր ենք առաջիկայում էլ շարունակել օգնությունը: Ի դեպ, նույն կերպ են վարվում նաև Տուապսեի շրջանի բոլոր գյուղերը: Եվ իմ կարծիքով, դրանում տարօրինակ և արտառոց ոչինչ չկա: Նեղն ընկածին սատարելը, բարեգթությունը յուրաքանչյուր ազնիվ մարդու պարտքն է: Գթությունը սահմաններ ու չակերտներ չպետք է ունենա...

Բ. ՎԱՐՈՒԺԱՆՅԱՆ